ՀՏԴ 323.1(479.25) + 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.1-100

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԵՐԸ 1878–1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1991–2023 թթ.)*

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Հայաստանի Հանրապետություն, պատմական գիտություն, Արևմտյան Հայաստան, բարեփոխումներ, ինքնավարություն, անկախություն, ինքնորոշում, խաղաղության պայմանագիր, գաղտնի համաձայնագրեր:

Նախաբան

Հայկական հարցը եղել և մնում է հայ պատմագիտության ամենաարդիական ու բազմաշերտ հիմնահարցերից մեկը: Դրա վկայությունը հիմնահարցին նվիրված մեծաթիվ ուսումնասիրություններն են՝ կատարված թե՛ Սփյուռքում և թե՛ Մայր Հայաստանում՝ երեք հանրապետությունների տարիներին:

Ուշագրավ է, որ անգամ կոմունիստական գաղափարաքաղաքական պարտադրանքի պայմաններում Հայկական հարցի պատմությունը հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում էր: Հիմնահարցի վերաբերյալ հիմնարար աշխատությունների հեղինակներ են՝ Առաքել Բաբախանյանը (Լեո)[1], Բագրատ Բորյանը[2], Ջոն Կիրակոսյանը[3], Մակիչ Արզումանյանը[4], Մկրտիչ Ներսիսյանը[5], Երվանդ Սարգսյանը[6]:

Պատմագիտական աշխատություններում, մասնավորապես՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայ ժողովրդի պատ-

---

* *Ներկայացվել է 17. I. 2024 թ., գրախոսվել է 31. I. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

[1] *Լ ե ո. 1994, 203:*

[2] Б о р ь я н. 1928; Б о р ь я н. 1929.

[3] *К и р а к о с я н. 1965, К и р а к о с я н. 1978, К и р а к о с я н. 1980, К и р а к о с я н. 1982, К и р а к о с я н. 1983:*

[4] *А р з у м а н я н. 1969:*

[5] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. 1983; *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991:*

[6] С а р к и с я н. 1962; *С а р г с я н, С а հ а к я н. 1963, С а р г с я н. 1964,* С а р к и с я н. 1972.

մություն» հիմնարար աշխատության 6-րդ հատորում, Հայկական հարցը սահմանված է որպես թուրքական լծից արևմտահայության ու Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման ու հայկական պետականության վերականգնման հարց, որը միջազգայնացվել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1878 թ. Սան Ստեֆանոյի հաշտության ռուս-թուրքական նախնական պայմանագրով և վեց մեծ տերությունների ու Օսմանյան Թուրքիայի միջև ստորագրված Բեռլինի միջազգային տրակտատով[7]: Ընդ որում, նշելով, որ ցարիզմն Օսմանյան կայսրության դեմ պատերազմները վարում էր հօգուտ իր երկրի տիրող դասակարգի շահերի՝ խորհրդահայ պատմագիտական աշխատություններում չեշտվում էր՝ իրենց օբյեկտիվ հետևանքներով դրանք կրում էին առաջադիմական բնույթ, քանի որ արագացնում էին սուլթանական բռնությունից բալկանյան ժողովուրդների, հայերի և մյուս ճնշված ժողովուրդների ազատագրումը:

Հայկական հարցի խորհրդահայ պատմագրության գնահատմամբ՝ եվրոպական իմպերիալիստների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր միջամտելու Օսմանյան կայսրության (որը XIX դ. վերջին վերածվել էր մեծ տերությունների կիսագաղութի) ներքին գործերին և ճնշում գործադրելու նրա վրա՝ նոր զիջումներ ու շահույթներ կորզելու համար: Նշվում էր, որ մեծ տերությունների միջև եղած հակասությունների ու դրանց միջև հմտորեն մանևրելու սուլթան Աբդուլ Համիդ II-ի դիվանագիտության հետևանքով է, որ չիրագործվեցին ինչպես 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, այնպես էլ՝ 1913 թ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ռուս-գերմանական փոխզիջումային ծրագիրը: Ավելին, 1895–1896 թթ.՝ սուլթանական, 1915–1918 թթ.՝ երիտթուրքական, իսկ 1920–1922 թթ. քեմալական կառավարությունների անմիջական պատասխանատվությամբ հայ ժողովուրդը ենթարկվեց ցեղասպանության: Խորհրդահայ պատմագրության գնահատմամբ՝ Անկախ և Միացյալ հայկական պետության ստեղծման փոխարեն 1921–1923 թթ. Լոնդոնի, Քի -Դ' Օրսեի և Լոզանի միջազգային խորհրդաժողովների որոշումները Թուրքիայում հայկական «ազգային օջախ» ստեղծելու, ապա այն հայ ազգային փոքրամասնության իրավունքների հարցով փոխարինելու վերաբերյալ ոչ այլ ինչ էին, քան մեծ տերությունների կողմից Հայկական հարցը վերջնականապես «փակելու» վկայություն:

Կաշկանդված լինելով կոմունիստական գաղափարախոսության կապանքներով՝ խորհրդահայ պատմագիտությունը հպանցիկ և բացառապես քննադատական տեսանկյունից է անդրադարձել ինչպես 1915–1916 թթ. Ասիական Թուրքիայի մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններին ու համաձայնագրերին, այնպես էլ՝ 1919–1920 թթ. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներին և 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրում Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող հոդվածներին, Ռուսաստանի ժամանակավոր կառավարության վարած քաղաքականությանը Հայկական հարցում: Դրան հակառակ, հանգամանորեն ներկայացվել և գերագնահատվել է Խորհրդային Ռուսաստանի դերը Թուրք ազգայնականների նոր հարվածներից հայ ժողովրդին պաշտպանելու, Խորհրդային Հայաս-

[7] Հայ ժողովրդի պատմություն. 1981, 109, 126:

տանն աշխարհասփյուռ հայերի ազգահավաքման կենտրոն դարձնելու գործում: Մասնավորապես, այդ տեսանկյունից են գնահատվել 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը Խորհրդային Ռուսաստանի ու Քառյակ միության պետությունների միջև, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը «բարեկամության և եղբայրության վերաբերյալ»: Հարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում Հայկական հարցը գլխավորապես ներկայացվել է որպես Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության և թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարց, իսկ այդ հարցում մեծ տերությունների վարած քաղաքականությունը հետազոտվել է առանձին-առանձին ու բացառապես քննադատական հարթության վրա:

Խորհրդային պատմագիտության գոյության 70 տարիների ընթացքում Հայկական հարցի պատմության վերաբերյալ նաև ստեղծվել է պատմաքաղաքական ու կուսակցական ընույթի հսկայական գրականություն, որի նպատակը ոչ միայն և ոչ այնքան պատմական ճշմարտության վերհանումն է եղել, որքան գաղափարախոսական ճակատում հակախորհրդային-հակակոմունիստական ուժերի դեմ պայքարելը: Ըստ այդմ, խորհրդահայ պատմագիտության քննադատության գլխավոր թիրախը եղել է XIX դարավերջին և XX դարասկզբին հայ իրականության մեջ ամենաազդեցիկ ազգային կուսակցությունը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ)՝ իր գործունեության հետ կապված ազգային հիմնահարցերով հանդերձ[8]:

Հիմնահարցի ուսումնասիրման նախադրյալները 1991 թ. անկախության վերականգնումից հետո

1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումով հայ պատմագիտության առջև բացվեցին զարգացման լայն հնարավորություններ: Նոր պայմաններում խորհրդահայ պատմագիտության մշակած մի շարք մոտեցումներ հիմք հանդիսացան առավել հիմնարար, համապարփակ հետազոտությունների համար: Միևնույն ժամանակ անկախությունը նախադրյալներ ստեղծեց մինչ այդ մասնակիորեն կամ միակողմանիորեն ուսումնասիրված հարցերը համակողմանիորեն հետազոտելու, Հայկական հարցի դիվանագիտական բովանդակությանը վերաբերող պատմական փաստերն ու երևույթները վերագնահատելու, անաչառ եզրահանգումներ կատարելու համար:

ՀՀ անկախության ավելի քան երեսուն տարիների ընթացքում Հայկական հարցի պատմագրության զարգացմանը մեծապես նպաստել և նպաստում են նաև Հայաստանի Հանրապետության ու Սփյուռքի գիտական հաստատությունների և պատմաբանների միջև համագործակցության ամրապնդումը[9],

---

[8] Հ ա կ ո բ յ ա ն. 2006, 36:

[9] Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում Հայաստանի ու Սփյուռքի գիտնականների միջև համագործակցության ամրապնդմանն է միտված Հայաստանի Հանրապետությունում սփյուռքահայ հայտնի մասնագետների գիտական վաստակի արժևորումը, նրանց աշխատությունների թարգմանությունը, հրատարակությունը, նաև՝ վերահրատարակությունը հայերեն ու ռուսերեն: Այսպես, դեռևս 1990 թ. ՀՍԽՀ ԳԱ արտասահ-

տարբեր երկրների ազգային արխիվային ֆոնդերում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ նորահայտ փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ դնելը, հայաստանյան գիտահետազոտական հաստատություններում հիմնահարցի համակողմանի ուսումնասիրման ուղղությամբ տարվող կազմակերպչական հմուտ աշխատանքը՝ ներառյալ Հայկական

մանյան անդամի պատվավոր կոչմանն է արժանացել ԱՄՆ-ի Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Հայաստանի պատմության ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը (1932–2023): Նրա՝ «Հայաստանի Հանրապետություն» անգլերեն քառահատոր կոթողային աշխատությունը 2005–2016 թթ. թարգմանվել է հայերեն, իսկ «1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունները» մենագրությունը 2007 թ.՝ ռուսերեն: Հայերեն թարգմանվել, ՀՀ ԳԱԱ աջակցությամբ տպագրվել են նաև սոցիոլոգ ու իրավագետ, Նյու Յորքի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր, Հայոց ցեղասպանության հիմնախնդրի գիտակ Վահագն Դադրյանի (1926–2019), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ և պատվավոր դոկտոր (1997), արգենտինահայ պատմաբան ու իրավաբան Պասկալ Օհանյանի (1932–2018), ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր (2001), Վիեննայի համալսարանի դոկտոր Արտեմ Օհանջանյանի, բանասեր, պատմաբան, գրականագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2011), Օքսֆորդի և Միչիգանի համալսարանների պրոֆեսոր, ԱՄՆ-ի հայագետների ընկերակցության նախագահ Գևորգ Բարդակչյանի, Սորբոնի միջազգային հարաբերությունների ինստիտուտի անդամ Արթուր Բեյլերյանի (1925–2005) աշխատությունները: 2014 թ. ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է ընտրվել նաև լիբանանահայ անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զավեն Մսըրլյանը: Միևնույն ժամանակ սփյուռքահայ պատմաբաններն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հայագիտական հիմնարար հետազոտություններում, նրանց աշխատություններն օգտագործվում են Հայաստանյան պատմաբանների կողմից՝ լրացնելով ու ամբողջացնելով Մայր հայրենիքում Հայկական հարցի վերաբերյալ գիտամեթոդական ուսումնասիրությունները: Այս տեսանկյունից անուրանալի է Մոսկվայի Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի տնօրեն, իրավագիտության դոկտոր, միջազգային իրավունքի պրոֆեսոր Յուրի Բարսեղովի (1925–2009), պատմաբաններ Ադապի Նասիբյան-Էքմեջյանի (1929–2018, Կիպրոս), Լևոն Մարաշլյանի (ԱՄՆ), Զավեն Մսըրլյանի (Լիբանան) ավանդը [տե՛ս Հովհաննիսյան. 2005, Հովհաննիսյան. 2014, Հովհաննիսյան. 2015, Հովհաննիսյան. 2016, Ованнесян. 2007; Дадрян. 2007; *Դադրյան. 2012,* Ohanian. 2005; Ohanian. 2010; *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.). 2004,* Ohanjanian. 1995; Österrich-Ungarn und Armenien 1912–1918*:* Sammlung diplomatischer Aktenstücke. 2005; Ohanjanian. 2005*; Բարդակչյան. 2005, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. I և II, Տէրտէրեան. 2016,* Барсегов. 1990; *Բարսեղով. 1999,* Барсегов. 1995; Барсегов. 2000; Барсегов. 2002; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2002; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2003; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2005; *Նասիպեան. 1994,* Marashlian. 1991; Marashlian. 2000; *Մսըրլեան. 1979, Մսըրլեան. 2010, Մսըրլեան. 2022,* Messerlian. 2015; Messerlian. 2021]*:*

հարցի պատմության տարբեր հիմնահարցերի նպատակային ընտրությունն ու երիտասարդ կադրերի ներգրավումը դրանց հետազոտություններում:

Արևմտյան Հայաստանի բարենորոգումների և ինքնավարության հարցերը

Հանրահայտ է, որ Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, քննարկումների առարկա է հանդիսացել 1878 թ. Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական բանակցություններում և հաշտության նախնական պայմանագրում, Բեռլինի միջազգային վեհաժողովում և դրա արդյունքում ստորագրված տրակտատում, արտացոլվել՝ 1880 թ. հունիսի 11-ին մեծ տերությունների կողմից օսմանյան կառավարությանն ուղղված բողոքի հայտագրում, որից հետո՝ սեպտեմբերի 7-ի նրանց համատեղ հայտագրում: Ապա Հայկական հարցը քննարկվել է 1881 թ. սեպտեմբերի 9-ին Կոստանդնուպոլսում մեծ տերությունների դեսպանների խորհրդաժողովում, 1895 թ. մայիսի 11-ին Բ. Դռանը ներկայացված բարենորոգումների անգլո-ֆրանսո-ռուսական Մայիսյան ծրագրում, այնուհետև՝ 1913 թ. հուլիսի 3–24-ին՝ Կոստանդնուպոլսում մեծ տերությունների ներկայացուցիչների դեսպանների Ենի Քյոյի խորհրդաժողովում, 1913 թ. սեպտեմբերի 10-ի ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնագրում և 1914 թ. հունվարի 26-ի (փետրվարի 8) ռուս-թուրքական Ակտում ու դրանց հարակից դիվանագիտական հեռագրերում, նամակներում, շրջաբերականներում, հաշվետվություններում:

Խորհրդահայ պատմագիտությունը, Հայկական հարցը գնահատելով որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, բավարարել է՝ նշելով, որ այն աշխարհի վերաբաժանմանը նախապատրաստվող գաղութատիրական երկրներին հնարավորություն էր ընձեռում ցանկացած ձևով միջամտել Թուրքիայի ներքին գործերին[10]: Ըստ այդմ, խորհրդային տարիներին պատմաբանների ճնշող մեծամասնությունն ուշադրության կենտրոնում է պահել լոկ Սան Ստեֆանոյի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող 16-րդ հոդվածը: Անտեսվել է դրա նկատմամբ եվրոպական տերությունների անհանգստության խորքային պատճառը. Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջությամբ Ռուսաստանին դարձնելու էր գերիշխող պետություն թե՛ Բալկանյան թերակղզում, թե՛ Սև ու Միջերկրական ծովերում: Եվ եթե Արևմտյան Հայաստանը ևս դառնար Ռուսաստանի ազդեցության ոլորտ, այդ դեպքում նա տարածաշրջանում մրցակից չէր ունենա: Ահա թե ինչու եվրոպական տերությունները Սան Ստեֆանոյի նախնական հաշտությունը դիտում էին որպես իրենց շահերի դեմ ուղղված պայմանագիր և պահանջում էին Ռուսաստանից վերանայել այն:

Հանդես գալով հայկական շահի դիրքից և զարգացնելով վերոնշյալ գնահատականը՝ հետխորհրդահայ պատմագիտության մեջ Սան Ստեֆանոյի պայմանագիրը կարևորված է որպես միջազգային առաջին փաստաթուղթ, որով Հայկական հարցը դարձել է միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի հարց, իսկ Թուրքիան ընդունել է «Հայաստան» աշխարհագրական ու պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շար-

[10] *Հայ ժողովրդի պատմություն. 1981, 109:*

քում[11]: Ավելին, Հայաստանյան պատմագիտության մեջ ներկայումս իշխող է այն տեսակետը, որ պատճառահետևանքային կապերով միմյանց կապված վերոնշյալ դիվանագիտական փաստաթղթերով 1878–1914 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը հանդիսանում է Հայկական հարցի պատմության առանձին փուլ: Այդ փուլում Հայկական հարցի դիվանագիտական բովանդակությունը հանգում էր Արևմտյան Հայաստանում մեծ տերությունների համատեղ վերահսկողության ներքո բարենորոգումների անցկացմանը՝ երկրամասն Օսմանյան կայսրության կազմում պահպանելով հանդերձ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի (1927–2003) գնահատմամբ՝ այդ փուլում Հայկական հարցում մեծ տերությունների քաղաքականությունը պայմանավորված էր Մերձավոր Արևելքում եվրոպական տերությունների և Ռուսաստանի շահերի բախմամբ, ինչի արդյունքում միջազգային դիվանագիտությունը չկարողացավ խուսափել Արևմտյան Հայաստանը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելուց[12]: Միևնույն ժամանակ Հայկական հարցի լուծման վերաբերյալ բոլոր նախագծերի ու ծրագրերի հիմքում Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածն էր, որը բխում էր XIX դարի վերջին գործող միջազգային իրավունքի նորմերից ու սկզբունքներից: Իսկ միջազգային իրավունքը, ընդհուպ Առաջին աշխարհամարտը, ճնշված ժողովուրդների ճակատագիրը դիտարկում էր գլխավորապես իշխող պետության սահմաններում նրանց ֆիզիկական անվտանգության ապահովման, այդ նպատակով հումանիտար ինտերվենցիայի, տվյալ ազգային խմբի անդամների անձնական և ունեցվածքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Դա հավասարազոր էր ինքնակառավարման կամ տարածքային ինքնավարության: Չէր կարևորվում ճնշված ժողովրդի ինքնորոշման իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքն իրացվում էր հարկադրանքի ուժով, այսինքն՝ օտարի տիրապետության դեմ ազատագրական զինված պայքարի միջոցով, ինչպես որ տեղի էր ունեցել Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութների, Հունաստանի, բալկանյան սլավոնական ժողովուրդների պարագայում[13]: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Յու. Բարսեղովն իրավացիորեն նշում է. «Օսմանյան կայսրության պատասխանատվությունը ժողովուրդների կոտորածների համար թե՛ վերջիններիս կառավարման ձևի բարեփոխման, թե՛ ցեղասպան պետության տիրապետությունից նրանց ազատագրման պահանջի ձևով առաջացել է ընավ ոչ Հայկական հարցի կապակցությամբ, այլ՝ կապված մյուս թուրքահպատակ ժողովուրդների՝ հույների, բուլղարների, սերբերի, ռումիններերի խնդիրների հետ»[14]:

Ինչ վերաբերում է Հայկական հարցով շահագրգռված մեծ տերությունների շահերին, նպատակներին ու հակասություններին, ապա հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության պահպանման դիվանագիտական սկզբունքը նրանց համար ամենա-

[11] Գալոյան. 2004, 266, 268, Կոստանդյան, Հովհաննիսյան. 2010, 429–447:

[12] Գալոյան. 2004, 266:

[13] Հովհաննիսյան. 2013, 119–120:

[14] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2005, 70.

հարմարն էր՝ ապահովելու բազմազգ կայսրության նկատմամբ բոլոր մեծ տերությունների շահերի հավասարակշռությունը, թույլ չտալու, որ իրենցից որևէ մեկը բացարձակ գերիշխանության հասներ «հիվանդ մարդու» նկատմամբ: Նույնիսկ Ռուսաստանը, որը դեռևս Ղրիմի 1853–1856 թթ. պատերազմի նախօրեին արտահայտում էր Օսմանյան կայսրության թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների հովանավորը լինելու իր մտադրությունը, այնուամենայնիվ, գիտակցում էր՝ status quo*-ի քաղաքականությունը բխում էր նաև իր շահերից. այն պաշտպանում էր Ռուսաստանը մրցակից տերությունների հզոր հակազդեցությունից: Այս համատեքստում եվրոպական տերությունները չէին կարող թույլ տալ Հայկական հարցի որևէ այլ ձևակերպում, արևմտահայերի անձնական ու գույքային իրավունքների պաշտպանությանն ուղղված բարենորոգումներից բացի: Պատահական չէ, որ մեծ տերությունները Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին թողել էին ռուս-թուրքական պատերազմում տարածքային ձեռքբերումների նվաճագույնը՝ Կարս քաղաքն իր հարակից տարածքով, իսկ Հայկական հարցի լուծումը դրվել էր միջազգային վերահսկողության ներքո*[15]: Նշենք, որ վերոնշյալ հանգամանքները ծայրաստիճան սրեցին հակահայկական տրամադրություններն Օսմանյան կայսրությունում և դարձան այն նշաձողը, որից հետո թուրքական իշխանությունները մշակեցին ու հետևողականորեն իրագործեցին արևմտահայերի ցեղասպանությունը*[16]:

Պատմաբանների ուսումնասիրություններում միանշանակ չէ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրին տրված գնահատականը: Նրա նշանակությունը կա՛մ գերագնահատվել է՝ տուրք տալով 1912–1914 թթ. Հայկական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականության նախաձեռնողական բնույթին և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը, կա՛մ թերագնահատվել է՝ ելնելով Հայկական հարցում մեծ տերությունների և, մասնավորապես, Մերձավոր Արևելքում Ռուսաստանի վարած քաղաքականության շահադիտական մղումներից ու հակահայկական դրսևորումներից: Եվ միայն վերջին երեսնամյակի ընթացքում լույս տեսած պատմագիտական աշխատություններում է տրված Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ այդ համաձայնագրի պատմաիրավական օբյեկտիվ գնահատականը: Շեշտված է, որ համաձայնագիրը մեծ տերությունների ու թուրքական պետության միջև Բեռլինի վեհաժողովում սկսված և մոտ 40 տարի տևած դիվանագիտական պայքարի հանգուցալուծում էր: Համաձայնագիրը հայերի դեմ ցեղասպանության գործողությունների կանխմանն ուղղված միջազգային իրավական փաստաթուղթ էր և իրագործման դեպքում, անշուշտ, կունենար այդ նշանակությունը: Դրանում բարենորոգումների 1895 թ. Մայիսյան ծրագրի համեմատ էապես խոցելի ու քննադատելի կողմը, թերևս, հայկական մեկ նահանգի փոխարեն երկու առանձին վարչական միավորների ստեղծում նախատեսող դրույթն էր: Համաձայնագիրն էլ ավելի առաջադիմական կլիներ, եթե դրա հիմքում դրվեր ռուսական սկզբնական նախագիծն առանց այն որևէ փոփոխության ենթարկելու: Այդ դեպքում հայկական վիլայեթներից կստեղծվեր մեկ միասնական վար-

---

[15] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2013, 121–122:*

[16] *Գ ա լ ո յ ա ն. 2004, 311–312, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2013, 122–123:*

չական միավոր, այն վերջապես կունենար ազգային ժողով, մահմեդականներով խիտ բնակեցված տարածքները չէին միացվի հայկական վարչական միավորին, նահանգում բոլոր պաշտոնների, օրենսդիր և գործադիր իշխանություն իրականացնող մարմինների բաշխման, ինչպես նաև ոստիկանության ու ժանդարմերիայի կազմակերպման հիմքում կդրվեր ոչ թե համամասնության, այլ հավասարության սկզբունքը, կարճակվեր քրդական «համիդիե» հեծելազորը, վերջ կդրվեր մուհաջիրների վերաբնակեցմանը հայկական նահանգում, հողային հարցը կլուծվեր ընդհանուր նահանգապետի ու հատուկ հանձնաժողովի կողմից՝ հայերից խլված հողերը նրանց վերադարձնելու միջոցով[17]:

Արևմտյան Հայաստանն Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ Անտանտի տերությունների 1915–1916 թթ. գաղտնի բանակցություններում և համաձայնագրերում

Առաջին աշխարհամարտի բռնկումը և Օսմանյան կայսրության մասնակցությունը պատերազմին՝ որպես կայզերական Գերմանիայի դաշնակից, ցրեցին Անտանտի կամ Եռյակ համաձայնության տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի վերջին հույսերն անգամ Օսմանյան կայսրության չեզոքությունն ապահովելու մասին: Վերջիններս, առանց հապաղելու, հրաժարվեցին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականությունից, ինչը բեկումնային նշանակություն ունեցավ Հայկական հարցի միջազգային իրավական բովանդակության համար. անցում կատարվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացումից դեպի իրենց հայրենիքում արևմտահայերի ինքնորոշման իրավունքի պաշտպանություն: Այնուամենայնիվ, Հայկական հարցի միջազգային բնույթը պահպանվեց՝ դառնալով հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների ողջ հետագա ընթացքի վրա էապես ազդող գործոն: 1914 թ. սեպտեմբեր-նոյեմբերին առաջ քաշվեց օսմանյան «ժառանգության», այսինքն՝ կայսրության ոչ թուրքական տիրույթների բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասերից մեկն էլ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցն էր: Այդպիսով, Հայկական հարցի դիվանագիտական պատմության մեջ սկսվեց նոր փուլ:

1915 թ. մարտ-ապրիլին հուշագրերի փոխանակմամբ, ապա ապրիլի 26-ին Լոնդոնի գաղտնի համաձայնագրի ստորագրմամբ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հստակ ձևակերպեցին ոչ միայն Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների կարգավիճակը, այլև՝ Օսմանյան կայսրության ոչ թուրքական տիրույթները մասնատելու իրենց մտադրությունը: Արևմտյան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, Կիլիկիան՝ Ֆրանսիային: 1916 թ. հունվարի 3-ին կայացավ անգլո-ֆրանսիական համաձայնություն, որը նախագծի հեղինակներ՝ բրիտանական կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչ, Մերձավոր Արևելքի փորձագետ Մարկ Սայքսի և Բեյրութի ֆրանսիական նախկին գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի անուններով կոչվեց Սայքս-Պիկոյի համաձայնություն: Այնուհետև այն փոխանցվեց Ռուսաստանի արտգործնախարա-

[17] *Հովհաննիսյան. 2022, 474–475:*

րությանը՝ ստանալու վերջինիս համաձայնությունը: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովի հետ երկարատև ու լարված բանակցությունների արդյունքում բրիտանական ու ֆրանսիական կողմերը ստիպված էին զիջումների գնալ և Ռուսաստանին հանձնել Ուրմիա լճի հյուսիսային առափնյա տարածքն ու Բիթլիսի լեռնանցքները: 1916 թ. ապրիլի 13 (26)-ին, մայիսի 9–16-ին և մայիսի 10 (23) – օգոստոսի 19 (սեպտեմբերի 1)-ին հուշագրերի փոխանակմամբ ստորագրվեցին համապատասխանաբար ռուս-ֆրանսիական, անգլո-ֆրանսիական և ռուս-անգլիական համաձայնագրերը՝ Օսմանյան կայսրության ոչ թուրքական տիրույթները միմյանց միջև բաժանելու վերաբերյալ: 1917 թ. ապրիլի 20-ին օսմանյան «ժառանգության» բաժանման ծրագրին միացավ Իտալիան՝ իր տարածքային պահանջներն ամրագրելով Սեն-Ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական գաղտնի համաձայնագրում[18]:

Ի տարբերություն խորհրդահայ պատմագրության, հետխորհրդահայ պատմագրության մեջ օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուս-իտալական համաձայնագրերին տրված է ոչ միայն պատմագիտական, այլև՝ միջազգային-իրավական գնահատական: Ինչ խոսք, Անտանտի տերությունների մշակած ծրագիրն որևէ ընդհանուր բան չուներ Հայկական հարցի բովանդակության հետ: Ավելին, այն վկայում էր Անտանտի տերությունների քաղաքականության նվաճողական, գաղութատիրական էության մասին. Հայաստանը բաժանվելու էր երկու մասի՝ Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև: Հայկական անկախ պետություն հիմնելու հարցը չէր քննարկվում: «Հայերի կյանքում պարզապես տեղի էր ունենում արմատական փոփոխություն. Թուրքիայի տիրապետության տակ գտնվող տարածքները անցնում էին Ռուսաստանին եւ Ֆրանսիային»[19],– նշում է անվանի պատմաբան Լ. Խուրշուդյանը (1927–1999): Այդուհանդերձ, կարևոր է, որ Անտանտի տերությունների համաձայնագրերով ճանաչվում էր զինագրավման միջոցով Արևմտյան Հայաստանը ցեղասպան օսմանյան պետության իշխանությունից ազատելու անհրաժեշտությունը, որը 1916 թ. արտացոլվեց պատերազմի նպատակների, ճնշված ժողովուրդների ազատագրության և ինքնորոշման մասին դաշնակից երկրների կառավարությունների, արտաքին գերատեսչությունների ղեկավարների հրապարակային ելույթներում ու պաշտոնական հայտարարություններում[20]: Իսկ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ճնշված ժողովուրդների ազատագրության և կարգավիճակի հարցերը դրվեցին Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի հիմքում: Հայ պատմաբանների աշխատություններում ուշադրություն է դարձվում նաև այն հանգամանքին, որ համաշխարհային պատերազմի ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի արդար լուծումը կապվում էր հենց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի հետ: Եվ դա պատահական չէր. Գերմանիայի, Օսմանյան կայսրության ու նրանց դաշնակիցների դեմ մղվող պատերազմում Անտանտի տերություններն

---

[18] *Հովհաննիսյան. 2002, 98:*

[19] *Խուրշուդյան. 1995, 41:*

[20] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2005, 225–226.

առաջնորդվում էին թուրքահպատակ ժողովուրդների ազատագրության սկզբունքով: Թեև վերջինս ավելի շուտ շահարկվում էր, քան՝ իրագործվում, այնուամենայնիվ, արևմտահայերի շահերի տեսանկյունից օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ ստորագրված անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերը գերադասելի էին թուրքական բռնակալությունից:

Փաստորեն, հետխորհրդահայ պատմաբանների աշխատություններում հիմնավորվում է 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններով և համաձայնագրերով միջազգային դիվանագիտության մեջ քաղաքական նոր մոտեցման սկզբնավորումը, որը նախադրյալներ էր ստեղծում թուրքական տիրապետությունից հպատակ ժողովուրդների ազատագրման համար: Հայկական հարցը լուծվելու էր ոչ թե Օսմանյան կայսրության սահմաններում հայկական վեց վիլայեթները բարենորոգելու կամ դրանց ինքնավար կարգավիճակ տալու, այլ՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ օսմանյան պետության գերիշխանությունը դադարեցնելու և միջազգային վերահսկողության ներքո ինքնավար Հայաստան հիմնելու միջոցով: Հայկական հարցի նկատմամբ Անտանտի տերությունների որդեգրած այս նոր քաղաքական մոտեցումը դարձավ այն միջազգային-իրավական հիմքը, որի վրա Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում առաջադրվեց Հայաստանի ինքնորոշման և անկախության պահանջը:

Հայկական հարցի «լուծման» թուրք-գերմանական ծրագիրը

Բացի այն, որ 1915–1916 թթ. Անտանտի տերություններն որոշակիացնում էին իրենց շահերն ու հետաքրքրություններն Օսմանյան կայսրության ոչ թուրքական տիրույթներում, այդ տարիները նաև առանձնանում են որպես Հայկական հարցը հայերի ցեղասպանությամբ լուծելու թուրքական քաղաքականության բարձրակետ: Ուստի, Հայաստանի Հանրապետության պատմագրության մեջ չէին կարող անտեսվել կամ շրջանցվել Արևմտյան Հայաստանի ու արևմտահայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության դիրքորոշման, Հայկական հարցում թուրք-գերմանական գործակցության հարցերը:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներն ուսումնասիրող հետխորհրդահայ պատմաբանների աշխատություններում ընդգծվեց սուլթանական ու երիտթուրքական կառավարությունների հակահայկական քաղաքականությանը տրվող գիտական այն գնահատականը, որ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման թուրքական քաղաքականությունը, անկախ պետական վարչակարգի փոփոխությունից, շարունակական էր: Այն իր էությամբ ոչ միայն ազգային էր, այլև՝ արտաքին քաղաքական: Դրա գործադրման ծավալները, ձևերն ու մեթոդներն աստիճանաբար կատարելագործվում էին՝ թուրքական վարչակարգերի նվաճողական նկրտումներին համապատասխան: Ավելին, համաշխարհային պատերազմի ընթացքում նվաճած կամ նվաճելիք տարածքների բաժանման ու կառավարման հեռանկարները, այդ թվում Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հարցերը նախապես քննարկվում և դրանց լուծման նախագծեր մշակվում էին ոչ միայն Անտանտի տերությունների գաղտնի դիվանագիտական բանակցություններում, այլև՝ Օսմանյան կայսրության ու կայզերական Գերմանիայի կառավարողների քննարկումներում: Պատմագիտական աշխատություններում նշվում է, որ արդեն XIX դ.

վերջին թուրքական կառավարող շրջանակներում հետևողականորեն արմատավորված օսմանիզմի գաղափարախոսությունը՝ ազգակից ժողովուրդներին Ջիբրալթարից մինչև Ջինաստան Օսմանյան կայսրության մեջ միավորելու ձգտումը, Հայկական հարցը Հայաստանի հայաթափման, հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման միջոցով լուծելու գաղափարաքաղաքական հիմքն էր: Մշակվում էր հայկական կենդանի «պատնեշի» վերացման պետական ծրագիր: Այն պաշտոնապես ձևակերպվեց Բեռլինի միջազգային վեհաժողովից հետո՝ մեծ վեզիր Քյամիլ փաշայի հրապարակած հրահանգով[21]: Ըստ այդմ, մի կողմից փորձ էր արվում հայերին, բուլղարներին, սերբերին, հույներին ներկայացնել իբրև «թուրքական քրիստոնյաներ», մյուս կողմից էլ այդ ժողովուրդների դեմ գործի էր դրվում ջիհադի՝ «անհավատների դեմ սրբազան պատերազմի» գաղափարը: Երկու դեպքում էլ հայերին, ի թիվս թուրքահպատակ այլ ժողովուրդների, սպառնում էր բնաջնջման, իսկ Հայաստանին՝ հայաթափման մռայլ հեռանկար:

Երիտթուրքական վարչակարգի ազգայնամոլական, հակահայկական քաղաքականությանը համահունչ էին Մերձավոր Արևելքում համագերմանիզմի շահերը: Դրանք թելադրում էին Օսմանյան կայսրությունը դիտել և՛ որպես փորձադաշտ հպատակ ժողովուրդների շահագործման, ձուլման և ֆիզիկական ոչնչացման հակամարդկային գաղափարներն իրագործելու համար, և՛ որպես հումքի աղբյուր ու ապրանքների արտահանման եկամտաբեր շուկա, և՛ որպես Արևելքի հետ կապող կարևոր օղակ: Գերմանիայի տնտեսական ու ռազմաքաղաքական ծրագրերի հիմնական գարկերակը պետք է լիներ Հայաստանով անցնող Բեռլին–Բաղդադ–Բասրա երկաթուղին: Համագերմանիզմի տեսաբանները և համաթրքության գաղափարախոսները համակարծիք էին, որ Օսմանյան կայսրության թուրքերն ամեն կերպ պետք է մոտենան Կովկասում ապրող իրենց ազգակից մահմեդականներին, կազմեն համատարած ազգային զանգված: Այդ պլանի իրագործմանը խոչընդոտող հայերին պետք էր դուրս մղել իրենց բնակավայրերից, տեղափոխել Միջագետք՝ բաղդադյան երկաթուղու շինարարության մեջ որպես էժան բանվորական ուժ օգտագործելու համար: Նախատեսվում էր Արևմտյան Հայաստան՝ հայերի բնակավայրեր, տեղափոխել մահմեդականներ արաբական երկրներից, Թրակիայից և Ռուսաստանից: Այսպես ծնվեց Արևմտյան Հայաստանում «կոմպակտ մուսուլմանական մեծամասնություն» ապահովելու գաղափարը[22]: Որպես դրա վկայություն, ԳԱԱ ակադեմիկոս Հր. Ավետիսյանը (1927–2004) մեջբերում է կատարում գերմանական աշխարհաքաղաքականության խոշոր տեսաբան, 1914 թ. հունիսին Բեռլինում ստեղծված Գերմանահայկական ընկերության փոխնախագահ Պաուլ Ռոհրբախի՝ պատերազմի նախօրյակին գրած «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքույկից. «Առաջ քաշելով «Ի՞նչ կլինի, եթե Անտանտի պետությունները միմյանց մեջ բաժանեն մի կողմից Բոսֆորի և Պարսից ծոցի, մյուս կողմից՝ Սուեզի ջրանցքից մինչև Արարատի միջև ընկած տարածքը» հարցը, Պ. Ռոհրբախը պատասխանում է. «Դա կլինի Գերմանիայի վախճանը, որպես համաշխարհային տերություն, առաջնակարգ տերություն-

---

[21] *Ավետիսյան. 1997, 3–4, Հովհաննիսյան. 2002, 37–39:*

[22] *Հովհաննիսյան. 2002, 39–49:*

ների շարքից Գերմանիայի դուրս մղում, քանզի Գերմանիայի ապագան Անատոլիայում է, Փոքր Ասիայում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում: ... Եվ քանի որ քաղաքական անհրաժեշտությունից ելնելով մենք պետք է պահպանենք Թուրքիան, մինչև վերջին ծայրահեղություն, ապա մենք չպետք է թույլ տանք, որպեսզի Հայաստանը անցնի Ռուսաստանին»»[23]*:*

Հայաստանյան պատմագրության մեջ, ի թիվս այլ հարցերի, ներկայացված է նաև Օսմանյան կայսրության ու Գերմանիայի հաղթանակի դեպքում նրանց տնօրինությանն անցնելիք տարածքների քաղաքական կարգավիճակի և վարչական կառուցվածքի վերաբերյալ նախագիծը, որում կարևոր տեղ էին գրավում Կովկասի ապագա վարչաքաղաքական կառուցվածքում հայկական տարածքների ճակատագրին ու Կովկասի էթնիկական բազմազանության մեջ հայերի ապագային վերաբերող հարցերը: 1915 թ. վերջերին երիտթուրքական կառավարության և Կովկասի մահմեդականության հասարակական-քաղաքական շրջանակների նախաձեռնությամբ հրապարակ բերված այդ նախագիծը պատմագիտական աշխատություններում գնահատվում է որպես Հայկական հարցն Արևմտյան Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման և բնաջնջման միջոցով լուծելու թուրք-գերմանական տարբերակի տրամաբանական շարունակություն, քանի որ այն նախատեսում էր «ազգային-կրոնական առումով միատարր» Օսմանյան կայսրության հովանավորությամբ «անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասի» կամ «Կովկասյան ընդհանուր տան» ստեղծում: Փաստորեն, Կովկասը վերածվելու էր բուֆերի Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Նշենք, որ միջազգային դիվանագիտության մեջ այդ գաղափարն առաջ էր քաշել անգլիական պրեմիեր-մինիստր Հենրի Պալմերսթոնը դեռևս 1853–1856 թթ. Ղրիմի (Արևելյան) պատերազմի ժամանակ՝ Ռուսաստանը թուլացնելու և նրա ազդեցության ոլորտները նեղացնելու նպատակով: Սակայն Կովկասն Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու գաղափարի զարգացումը և հստակ ձևակերպումը կապված են «Կովկասյան ընդհանուր տան» թուրքական, այնուհետև Կոստանդնուպոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան ծրագրերի հետ: Դրանցից առաջինը մշակվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ երկրորդը՝ դրա ավարտից անմիջապես հետո:

Օսմանյան կայսրության կառավարող շրջանակների հեռահար ծրագրերն ամբողջացվեցին, երբ 1916 թ. Ցյուրիխում գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակվեց ազգությամբ վրացու վերագրվող «Վրաստանը և պատերազմը» գրքույկը «Կովկասյան ընդհանուր տուն» կամ ֆեդերացիա հիմնելու վերաբերյալ[24]*: Գրքույկի հեղինակը լիահույս էր, որ Կովկասի բոլոր ժողովուրդները կհամախմբվեին՝ ռուսներին երկրամասից վտարելու համար, որ Վրաստանը միայն Օսմանյան կայսրության ու նրա դաշնակիցների օգնությամբ կարող էր վերականգնել ավելի քան մեկ դար առաջ կորցրած անկախությունը: Ապա օրինաչափ էր համարվում Կովկասում իրեն հարակից հողե-*

[23] *Ավետիսյան. 1997, 7–8:*

[24] *Գրքույկի հիմնական դրույթները Հովհ. Հակոբյանի թարգմանությամբ և վերլուծությամբ տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 17. IX. 1917, 20. IX. 1917, 21. IX. 1917, 22. IX. 1917, 24. IX. 1917, 26. IX. 1917, 27. IX. 1917:*

րի մի մասի բռնակցումը Թուրքիային՝ որպես պատերազմում նրա ռազմական ծախսերի հատուցում: Ուշագրավ է, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում թուրքական պատվիրակությունը հենց այդպիսի հիմնավորմամբ և 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վերականգնման պահանջին զուգահեռ բարձրացրեց նաև Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերն Օսմանյան կայսրությանը վերադարձնելու հարցը: «Կովկասյան ընդհանուր տան» սահմաններում Հայաստանը, որպես վարչաքաղաքական և աշխարհագրական հասկացություն, վերացվելու էր, հայկական տարածքները տարրալուծվելու էին վրացական ու թաթարական գավառների կազմում, իսկ հայերին դրանց սահմաններում տրվելու էր միայն ազգային եկեղեցական-մշակութային ինքնուրույնություն[25]:

«Կովկասյան ընդհանուր տան» գաղափարը, ըստ հայ պատմաբանների, հատկանշական էր Կովկասում ոչ միայն Թուրքիայի, այլև՝ կայզերական Գերմանիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից: Գերմանիայի Արևելյան քաղաքականության մեջ արդեն ձևավորվում էր Օսմանյան կայսրության և Ռուսաստանի սահմանին մի շարք մանր պետություններ ստեղծելու մտադրությունը, որով գերմանական դիվանագետներն առաջնորդվելու էին նաև Գերմանիայի ու Ռուսաստանի միջև ընկած սահմանային գոտու կարգավորման հարցում: Փաստորեն, Արևմտյան Հայաստանը հայաթափելուց ու նրա վրայով Կովկաս մտնելուց հետո թուրքերը վերացնելու էին նաև Արևելյան Հայաստանը, իսկ հայ բնակչությանը՝ տարրալուծելու Կովկասում ստեղծվելիք պետական միավորների մեջ: Նշանակում է, որ Առաջին աշխարհամարտում Գերմանիայի, Օսմանյան կայսրության և նրանց դաշնակիցների հաղթանակի դեպքում արևելահայությանը սպառնալու էր ձուլման ու կոտորածների վտանգը:

Այսպիսով, հետխորհրդահայ պատմաբանները Հայկական հարցի 1915–1916 թթ. պատմության ուսումնասիրությունն ամբողջացրել են երկու իմաստով. նախ՝ ցույց է տրվել, որ Հայաստանը և հայ ժողովուրդը վարչաքաղաքական վերաբաժանման էին ենթարկվելու անկախ այն բանից, թե որ ռազմաքաղաքական խմբավորումը՝ Անտա՞նտը, թե՞ Քառյակ միությունը, կհաղթեր համաշխարհային պատերազմում, քանի որ նրանցից յուրաքանչյուրի մշակած հետպատերազմյան կարգավորման ծրագրում էլ ներառված էին արևմտահայկական տարածքների պատկանելության, սահմանների, կարգավիճակի և հայ բնակչության ճակատագրի հարցերը: Այնուհետև, Օսմանյան կայսրության ոչ թուրքական տիրույթների բաժանման անգլո-ֆրանս-ռուսական և «Կովկասյան ընդհանուր տան» կամ Կովկասյան ֆեդերացիայի թուրք-գերմանական ծրագրերի պատմահամեմատական վերլուծության շնորհիվ հիմնավորվել է այն տեսակետը, որ, չնայած իր զավթողական էությանը, այնուամենայնիվ, անգլո-ֆրանս-ռուսական ծրագիրը նախընտրելի էր թուրք-գերմանականից, քանի որ դրանում չէր դրվում հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարց. ավելին, կարևորվում էր Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ թուրքական գերիշխանության դադարեցման անհրաժեշտությունը:

---

[25] *Ավետիսյան. 1997, 9, Հովհաննիսյան. 2002, 102–103:*

Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի ձևավորումը

Գագաթնակետին հասած Հայոց ցեղասպանության թուրքական պետական քաղաքականության և Անտանտի տերությունների ռազմաքաղաքական նպատակների ու հռչակած դիվանագիտական սկզբունքների ազդեցությամբ կարևորվեցին և քննարկման առարկա դարձան Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից ազատագրելու, հայրենազրկված հայերի համար Հայրենիք վերադառնալու միջազգային իրավական նախադրյալներ ու հնարավորություններ ստեղծելու, միջազգային վերահսկողության կամ մեծ տերություններից որևէ մեկի հովանավորության ներքո Հայաստանի ինքնավարության և անկախության, հայ ժողովրդի նկատմամբ ոճրագործությունների համար թուրքական պետության պատասխանատվության հարցերը:

«Արևմտահայաստանի հայաթափումից հետո խնդիրն այլևս Հայկական հարց կոչելն անիմաստ էր: Այն հայության կողմից այդուհետ ընկալվում էր որպես բռնագավթված Հայրենիքը վերադարձնելու, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու, տարածքային, նյութական ու բարոյական հատուցման հասնելու խնդիր: Ուստի ամբողջապես արդարության համար հայ ժողովրդի մղած այդ պայքարը ստացավ Հայ դատ խորհրդանշական անվանումը»[26],– նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը 2015 թ. հոկտեմբերի 15-ին «Հայոց ցեղասպանություն–100: Ճանաչումից՝ հատուցում» խորագրով երևանյան միջազգային գիտաժողովում հնչեցված «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հատուցման հիմնախնդիրը» թեմայով զեկուցման մեջ: Ավելին, զարգացնելով իր միտքը՝ պատմաբանն առանձնացրեց Հայոց ցեղասպանությունից հետո Հայ դատի համար մղված 100-ամյա պայքարի պատմության չորս շրջափուլ՝ 1915–1923 թթ., 1923–1945 թթ., 1945–1965 թթ. և 1965–2015 թթ.՝ հիմք ընդունելով պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում խնդրի նկատմամբ միջազգային ասպարեզում առկա վերաբերմունքի սկզբունքային տարբերությունները՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից մինչև դրա հետևանքների հաղթահարման ու հատուցման պահանջի ձևակերպում[27]: Ըստ այդմ, առաջին շրջափուլն ընդգրկում է 1915–1923 թթ., այսինքն՝ բուն ցեղասպանության տարիները, երբ աշխարհի մի շարք պետություններ և միջազգային կազմակերպություններ ոչ միայն դատապարտեցին հայերի ֆիզիկական բնաջնջման ու հայրենազրկման թուրքական քաղաքականությունը, այլև որպես դրա հետևանքների վերացման եղանակ առաջարկեցին Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման ծրագիրը[28]:

Նորահայտ բազմալեզու արխիվային փաստաթղթերի հիման վրա պատմաբանները համակողմանիորեն ներկայացրել են Արևմտյան Հայաստանի հարցի դիվանագիտական քննարկումները 1917–1918 թթ. Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև Բրեստ-Լիտովսկի 1918 թ. Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան և Հայաստանի Հանրապետության ու Օս-

---

[26] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2015, 157:*
[27] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2015, 158–163:*
[28] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2015, 158:*

մանյան Թուրքիայի միջև Բաթումի բանակցություններում[29]*: 1917–1918 թթ. Հայկական հարցում մեծ տերությունների ռազմաքաղաքական շահերը, Արևմտյան ու Արևելյան Հայաստանի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի զավթողական ծրագրերը լուսաբանվել են սեփական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում հայերի ազգային ինքնորոշման իրավունքի տեսանկյունից*[30]*: Նաև վերանայվել են 1917 թ. խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակին, Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերին տրված պատմաիրավական և քաղաքական գնահատականները*[31]*:*

Պատմաբան Վահան Մելիքյանի դիտարկմամբ՝ արդեն 1916 թ. կեսերին և 1917 թ. սկզբին, երբ ռուսական բանակն ավարտել էր Արևմտյան Հայաստանի զինագրավումը, Հայկական հարցը չուներ իր պատմության նախորդ ժամանակաշրջաններին բնորոշ միջազգային, դիվանագիտական բնույթ. այն դարձել էր ազգային բարդ ու հակասական խնդիրներով պայմանավորված ներքին՝ Հայոց հարց[32]*: Հղում կատարելով դիվանագիտական փաստաթղթերին՝ պատմագիտական աշխատություններում նշվում է, որ հայ ազգային-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի լավագույն լուծում էր ընդունվում թուրքական տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանի զինագրավումը Դաշնակիցների՝ փաստացիորեն Ռուսաստանի կողմից*[33]*: Սակայն պետք է հաշվի առնել, որ ժամանակավոր կառավարությունը մի կողմից՝ բռնակցման գաղափարին դեմ լինելու և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու, մյուս կողմից զինագրավումները շարունակելու ու Արևմտյան Հայաստանի ինքնավարության երաշխիքների կայունացումից խուսափելու իր քաղաքականությամբ վստահություն չէր ներշնչում հայ ազգային-քաղաքական շրջանակներում: Պատահական չէ, որ Հայկական հարցը եվրոպական կառավարող շրջանակներում բարձրացնելու նպատակով դեռևս 1912 թ. կազմված Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը շրջանառության մեջ դրեց Թուրքիայի հայկական բոլոր հողերը Կովկասից մինչև Միջերկրական ծով միավորելու, մեկ պետության կամ համաեվրոպական համագործակցության՝ հայկական պետության ներքին կյանքին սահմանափակ միջամտություն ենթադրող ժամանակավոր հովանավորության ներքո*

---

[29] *Այս մասին մանրամասն տե՛ս* Ավետիսյան. *1997,* Պետրոսյան. *2023:*

[30] Ավետիսյան. *1997, 51–53,* Մելիքյան. *1997,* Հակոբյան. *2002, 277–304,* Марукян. 2003; Պողոսյան, Պողոսյան. *2004,* Պողոսյան. *2016, 8–23:*

[31] Խուրշուդյան. *1995, 44,* Ավետիսյան. *1997, 72, 73,* Մելքոնյան. *1998, 191,* Գալոյան. *1999, 20–22,* Марукян. 2003, 396–399; Պողոսյան, Պողոսյան. *2004, 56,* Կարապետյան. *2004, 10–11,* Դանիելյան, Մելքոնյան. *2008, 271,* Մարուքյան. *2014, 89–93,* Պետրոսյան. *2018, 201–243:*

[32] Մելիքյան. *1997, 156–157,* Մելիքյան. *2010, 555–556:*

[33] *Անտանտի կամ Եռյակ համաձայնության տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց միացած 22 պետությունները, այդ թվում՝ Իտալիան, Ճապոնիան ու ԱՄՆ-ը:*

ինքնավար, այնուհետև Անկախ և Միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարը: Դա համապատասխանում էր արևմտահայկական տարածքների իրավական կարգավիճակի հարցն Արևելյան Հայաստանի հարցից առանձին քննարկելու՝ հայ հասարակական-քաղաքական ուժերի սկզբունքային դիրքորոշմանը[34]*: Միաժամանակ, Պողոս Նուբարի ծրագրում ընդգծվում էր արևմտահայկական հողերի միասնությունը՝ ի հակադրություն անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի, որոնք նախատեսում էին Արևմտյան Հայաստանի բաժանում Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև*[35]*: Պատմաբան Գայանե Մախմուրյանի իրավացի դիտարկմամբ՝ այս ծրագիրը որոշակի վտանգներ էր պարունակում, քանի որ միջազգային առևտրում և համագործակցության մեջ կապող օղակ լինելու փոխարեն ինքնավար Հայաստանը դառնալու էր բուֆեր Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջագետքի ու Սիրիայի միջև*[36]*:*

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և ապա նույն թվականի ապրիլին ԱՄՆ-ի մուտքը համաշխարհային պատերազմ, նաև փոքր ու ճնշված ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության վերաբերյալ նախագահ Վուդրո Վիլսոնի հայտարարությունները պատմական նշանակալի իրադարձություններ էին, որոնք Անտանտի երկրների քաղաքական օրակարգ բերեցին բռնագավթումների սկզբունքից հրաժարվելու և մեծ տերությունների կողմից ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու անհրաժեշտությունը[37]*: Դրանով լուրջ հարված էր հասցվում 1915–1916 թթ. Օսմանյան կայսրության ասիական տիրույթների մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին, ինչը նշանակում էր, որ Հայկական հարցի լուծման դիվանագիտական սկզբունքները ենթարկվելու էին վերանայման:*

Աստիճանաբար փոխվում էին նաև Արևմտյան Հայաստանի հարցի լուծման գործում վճռորոշ դերակատարում ունեցող աշխարհաքաղաքական ակտորները. Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան Ռուսաստանից անթաքույց շրջվում էին դեպի պատերազմի մեջ մտած ԱՄՆ-ը, որի արտաքին քաղաքականության ուղղվածությունն ու ակտիվությունը պատերազմի ցանկալի ավարտ և արդյունքներ էին խոստանում նրանց համար[38]*:*

---

[34] *Մելիքյան. 1997, 177–180, Ավետիսյան. 1997, 40, Գալոյան. 1999, 15–16, Պողոսյան, Պողոսյան. 2004, 44–45, Պողոսյան. 2016, 8–23:*

[35] *Հովհաննիսյան. 2010, 252–253,* Махмурян. 2018, 27–28.

[36] Махмурян. 2018, 28.

[37] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 151, թ. 12–13, 20–21:*

[38] *Դեռևս 1916 թ. փետրվարի 14-ին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվել էր, այսպես կոչված, «անորսալի համաձայնագիրը» Օսմանյան կայսրության վերաբերյալ, ըստ որի՝ ԱՄՆ-ն իր մասնաբաժինը պետք է ստանար Մերձավոր Արևելքում: Ավելին, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Բալֆուրի միջոցով ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը քաջատեղյակ էր Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին. տե՛ս Մախմուրյան. 2015, 160–161:*

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցիկ դերն Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում, ինչի առաջին վկայությունը 1917 թ. ապրիլի 20-ին (մայիսի 3-ին) Սեն-Ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական համաձայնագրի կնքումն էր առանց Ռուսաստանի մասնակցության[39]*: Ավելին, դաշնակիցները սպառնում էին Ռուսաստանին դուրս թողնել հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորմանն ուղղված ռազմաքաղաքական «խաղից», եթե վերջինս չվերանայեր իր գործողությունների ակտիվությունը ռազմաճակատներում: Այս պայմանների ազդեցությամբ է, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էլզաս-Լոթարինգիայի ու Արևմտյան Հայաստանի հարցում որդեգրեց «հաշտություն՝ առանց զինագրավումների ու ռազմատուգանքների՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրա» զգուշավոր մոտեցումը՝ նպատակ ունենալով նշված տարածքները վերածել բուֆերային կամ անվտանգության գոտիների Գերմանիայի ու Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև: Արևմտյան Հայաստանն այդ նույն դերը կարող էր կատարել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ազդեցության գոտիների միջև՝ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի իրագործման դեպքում, իսկ Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին չտրվելու դեպքում Արևմտյան Հայաստանը կծառայեր իբրև բուֆեր նրա ու Թուրքիայի միջև*[40]*: Դա նշանակում էր Ռուսաստանի վերադարձ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության քաղաքականությանն այն հաշվով, որ վերջինիս դաշնակից տերություններն էլ չկարողանային Ասիական Թուրքիայում իրենց հետաքրքրող տարածքների համար պահանջել ավելին, քան դրանց ինքնավարությունը կայսրության սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չէր Կոստանդնուպոլսի ու սևծովյան նեղուցների հարցը*[41]*: Դրանով ժամանակավոր կառավարությունը, ըստ էության, ակնարկում էր, որ առանց ստանալու Ռուսաստանի տնտեսության զարգացման և արտաքին անվտանգության ամրապնդման տեսանկյունից կարևոր այդ տարածքները, իմաստ չէր տեսնում պահելու Արևմտյան Հայաստանը*[42]*: 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերով նախատեսված արևմտահայկական տարածքները Ռուսաստանի կողմից պահպանելու դեպքում Արևմտյան Հայաստանում կիրացվեր բնիկների՝ հայերի ինքնորոշման իրավունքը, Հայկական հարցը կլուծվեր հայ ազգային շահերին ու ակնկալիքներին համահունչ. Արևմտյան Հայաստանը կստանար ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո: Մինչդեռ հակառակ դեպքում ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան մերժելու էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը և Ռուսաստանին զրկելու այդ տարածքից:*

---

[39] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2002, 98, Գ ա լ ո յ ա ն. 2004, 692–693:*

[40] Մ ա ր ո ւ կ յ ա ն. 2003, 325–399.

[41] *Ըստ ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի, 1917 թ. կեսերին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, նահանջելով 1915–1916 թթ. գաղտնի համաձայնագրերի դիրքերից, կրկին առաջարկում էին Արևմտյան Հայաստանը թողնել օսմանյան պետության սահմաններում՝ նրան տալով ինքնավարություն՝ առանց արտաքին վերահսկողության (այս մասին տե՛ս* Մ ա խ մ ո ւ ր յ ա ն. 2018, 28–29)*:*

[42] Մ ա ր ո ւ կ յ ա ն. 2003, 376.

Թեև ԱՄՆ-ը մինչև համաշխարհային պատերազմի ավարտը չեզոքություն պահպանեց Օսմանյան կայսրության հանդեպ, այնուամենայնիվ, հայ ազգային-քաղաքական շրջանակներում գերիշխող էր այն տեսակետը, որ «ԱՄՆ-ը կարող է իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական վճռի խնդրում»[43]:

Սակայն 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը և Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը նոր ու էական շտկումներ մտցրին Հայաստանի սահմանների և իրավաքաղաքական կարգավիճակի վերաբերյալ տերությունների դիրքորոշումներում: Նշենք, որ Հոկտեմբերյան հեղաշրջումից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն ընկած ժամանակահատվածը հայաստանյան պատմագրության մեջ դիտարկվում է որպես Հայկական հարցի պատմության առանձին փուլ, որն իր բովանդակությամբ տարբերվում է հիմնախնդրի պատմության նախորդ ու հաջորդ ժամանակահատվածներից[44]: Վերոնշյալ պատմական իրադարձություններն ուղղակիորեն ազդեցին Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների ընթացքի վրա, իսկ վերջիններիս արդյունքներն որոշիչ եղան Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրում: Ժամանակավոր կառավարության տապալումն արմատապես փոխեց Ռուսաստանի վերաբերմունքը թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Կովկասյան ռազմաճակատի և թե՛ Դաշնակիցների նկատմամբ, ինչի հետևանքով ձախողվեց Հայկական հարցի լուծումը[45]: Գիտական այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակն ոչ միայն չեղեց ռուսական բազմազգ պետությանն իր պատմական զարգացման բնականոն ընթացքից, այլև էապես ազդեց թե՛ միջազգային հարաբերությունների նոր՝ Վերսալյան համակարգի ձևավորման և թե՛ նրա գոյության ժամանակաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների վրա: 1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև ստորագրված Բրեստ Լիտովսկի հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությանը վերադարձվեց Արևմտյան Հայաստանը՝ ներառյալ Կարսն ու Արդահանը: Այդպիսով, Ռուսաստանի և Թուրքիայի միջև վերականգնվեց 1877 թ. պետական սահմանագիծը: Արդեն հայաթափված Արևմտյան Հայաստանին վերատիրացած Թուրքիայի առջև բացվեց դեպի Արևելյան Հայաստան տանող ճանապարհը: Ավելին, թուրքական գործոնն աստիճանաբար ազդեցիկ նշանակություն ստացավ տարածաշրջանային հարցերի լուծման մեջ թե՛ Ռուսաստանի և թե՛ արևմտաեվրոպական պետությունների համար:

Հայկական հարցի լուծման սևրյան գործընթացը

Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում մշակվեցին հետպատերազմյան աշխարհակարգի հիմնական սկզբունքները, որոնք իրենց արտացոլումը գտան ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ 1917 թ. վերջերին արված հայտա-

[43] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 1: Նշենք, որ ԱՄՆ-ը Օսմանյան կայսրությանը ոչ միայն պատերազմ չէր հայտարարել, այլև երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունները խզողը թուրքական կողմն էր (տե՛ս* Papers relating to the foreign relations of the United States. 1917 Supplement 1, The World War. 1931, 603)*:*

[44] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2019, 112–113:*

[45] *Խ ո ւ ր շ ո ւ դ յ ա ն. 1995, 41, Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 2004, 8–9:*

բարությունները և դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակում, 1918 թ. հունվարի 5-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի՝ Համայնքների պալատում ունեցած հիմնարար ելույթում, ապա՝ հունվարի 8-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում ներկայացված «14 կետեր»-ում ու հոկտեմբերի 14-ին հրապարակված դրանց պաշտոնական մեկնաբանություններում: Ըստ դրանց, հայ ժողովրդի անվտանգության երաշխիք համարվում էր անկախ պետականությունը, ճանաչվում էին հայերի օրինական իրավունքներն իրենց հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ[46]*: Այսպես սկիզբ դրվեց Հայկական հարցի լուծման սևրյան գործընթացին, որի գագաթնակետը դարձան 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագիրը և նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնի ստորագրած իրավարար վճիռը, իսկ եզրափակիչ ակտը՝ 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի միջազգային պայմանագիրը: Հայկական հարցի պատմության այս շրջափուլում դրա դիվանագիտական բովանդակությունը հայ ժողովրդի ինքնորոշումից և Միացյալ ու Անկախ Հայաստանից գլխիվայր շրջվեց դեպի Թուրքիայի տարածքում Հայկական «ազգային օջախի» ստեղծում, ապա հայ ազգային և կրոնական փոքրամասնության իրավունքների պաշտպանություն: Հայաստանյան պատմաբանների գնահատմամբ, դրա պատճառներն էին՝*

1. Հայկական հարցում առանցքային դերակատարում ունեցող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի հակասությունները Կոնգեսի և Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյի հետ, ինչպես նաև՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջից ունեցած կախվածությունը[47]*,*

2. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում քննարկման առարկա դարձած Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագծի անուղղակի կապը թուրքական կառավարության համաթուրքական նվաճողական ծրագրերի հետ[48]*,*

3. Բրիտանական կառավարության հակվածությունը լուծելու Հայկական հարցը թուրքական պետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանման պայմաններում, որպես այլընտրանք ԱՄՆ-ի գլոբալ հավակնություններին[49]*,*

4. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության թուլությունը. ՀՀ սահմանները ձևավորվում էին ոչ թե «ներսում»՝ պետության շահերին ու հնարավորություններին համապատասխան, այլ այդ հարցի լու-

---

[46] *Մելքոնյան. 1998, 191, Դանիելյան, Մելքոնյան. 2008, 271,* Архив полковника Хауза. 1944, 148–157; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2002, 307 (док. № 311), 308–310 (док. № 314–317); Armenia in documents of the U.S. Department of State, 1917–1920. 2020, 17–18 (doc. № 12).

[47] *Հովհաննիսյան. 2020, 163–164:*

[48] *Ավետիսյան. 1997, 330, 335–336, Ավետիսյան. 2000, 24–31, Հովհաննիսյան. 2020, 164–169, 171–173:*

[49] Махмурян. 1999, 37, 76; Махмурян. 2002, 29–30, 39; 97–100, 162–167; *Մելիքյան. 2007, 25, Հովհաննիսյան. 2020, 171–175:*

ծումն ակնկալվում էր «դրսից»՝ Դաշնակից տերություններից[50]*, ինչն էլ հայ ժողովրդի ու նրա անկախ հանրապետության համար ծնում էր անորոշ ու սպասողական իրավիճակ՝ կաչկանդելով և կասեցնելով հայկական պետականության համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի լուծումը*[51]*,*

5. մեծ տերությունների մրցակցությունն ու հակասությունները, որոնց դրսևորումը ՀՀ-ին ռազմական, դիվանագիտական, տնտեսական ու ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ խոստումների շռայլության համապատկերում նշված ուղղություններով նրանց ժլատ, թերի ու աննշան գործողություններն էին, իսկ անմիջական հետևանքը՝ թուրքական գործոնի աստիճանական ուժեղացումը Մերձավոր Արևելքում և Այսրկովկասում[52]*,*

6. հայ իրականությանը բնորոշ հատվածականությունը և դրա առանցքային դրսևորումը՝ արևմտահայ ու արևելահայ առճակատումը, որը խոչընդոտում էր ՀՀ կողմից ազգային խնդիրներն ու նպատակները միջազգային ասպարեզում հիմնավոր և ընդունելի ներկայացնելուն[53]*:*

Պատմաբաններ Ա. Մելքոնյանի[54]*, Գ. Գալոյանի*[55]*, Հր. Սիմոնյանի*[56]*, Է. Զոհրաբյանի*[57]*, Լ. Խուրշուդյանի*[58]*, Գ. Մախմուրյանի*[59]*, Ա. Հակոբյանի*[60]*, Ա. Մարուքյանի*[61]*, Ա. Պապյանի*[62]*, Վ. Մելիքյանի*[63] *վերլուծություններն ու եզ-*

---

[50] *Դաշնակից տերությունները բաժանված էին երկու խմբի՝ Գլխավոր դաշնակից և Դաշնակից տերությունների: Գլխավոր դաշնակից տերություններն էին՝ Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ Դաշնակից տերությունները՝ Պորտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հեջազը [տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, 676 (փաստ. № 338)]:*

[51] Махмурян. 1999, 42–43; *Մելիքյան. 2007, 43, Հովհաննիսյան. 2020, 176–177,* Petrosyan. 2023, 76–99.

[52] Махмурян. 1999, 51, 56, 98; *Մելիքյան. 2007, 25, Հովհաննիսյան. 2020, 178–180:*

[53] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 31, թ. 1–17,* Махмурян. 1999, 36, 61, 64–67; *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.). 2004, 333–504, Հարությունյան. 2004, 67–114, Պողոսեան. 2004, 164–170, Մելիքյան. 2007, 5–9, 11–12, 20, 23–24, 28:*

[54] *Մելքոնյան. 1998, Դանիելյան, Մելքոնյան. 2008, Մելքոնյան. 2011, Մելքոնյան. 2013, Մելքոնյան. 2015, Մելքոնյան. 2021, Մելքոնյան. 2022, 259–276, 277–290:*

[55] *Գալոյան. 1999:*

[56] *Սիմոնյան. 1991:*

[57] *Զոհրաբյան. 2002:*

[58] *Խուրշուդյան. 1995, Խուրշուդյան. 2002:*

[59] Махмурян. 1999; Махмурян. 2002, Махмурян. 2018.

[60] *Հակոբյան. 2018, Հակոբյան. 2020, Հակոբյան. 2022:*

[61] *Մարուքյան. 2014:*

[62] *Պապյան. 2012:*

[63] *Մելիքեան. 2010:*

բահանգումները գիտական ծանրակշիռ հիմք են ապահովում միջազգային իրավունքի տեսանկյունից Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և հայոց պահանջատիրության հիմնահարցերը մշակելու համար: Հիմնավորված է 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի հաշտության պայմանագրի՝ Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող հոդվածների, նույն թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի[64] *վավերականությունն ու արդիականությունը:*

Գիտական և քաղաքական հրատապություն ունեն 1921–1923 թթ. դիվանագիտական բանակցություններում ու միջազգային պայմանագրերում Հայկական հարցի արծարծումների, մասնավորապես՝ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերլուծությանն ու վերարժևորմանը նվիրված աշխատանքները: Դրանցում կենտրոնականը նշված պայմանագրերի՝ միջազգային իրավունքին համապատասխանության հարցերն են: Պատմաբանների գնահատմամբ, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով Թուրքիան և Ռուսաստանն ամենակոպիտ կերպով խախտել են հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Այդ պայմանագրերը հակաօրինական են, թեև մինչ օրս դրանցով են կարգավորվում հայ-թուրքական սահմանային հարաբերությունները[65]*:*

Պատմաբանների գնահատմամբ, հայ ժողովրդի հողային պահանջատիրությունը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին նաև այն հիմնավորմամբ, որ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը և 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը միանգամայն տարբեր միջազգային-իրավական փաստաթղթեր են, ուստի առաջինը երկրորդով չէր կարող փոխարինվել[66]*:*

Հայոց պահանջատիրության տեսանկյունից արժեքավոր է վերջերս լույս տեսած 1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածուն[67]*: Դրանում կենտրոնականը, թերևս, 1920 թ. դեկտեմբերի 10-ին Ազգերի լիգայի «5-րդ հանձնաժողովի ներկայացրած հաշվետվություն»-ն է, որով վերահաստատվում էր Հայաստանի Հանրապետության տարածքային իրավունքը: Ըստ փաստաթղթի, ՀՀ տարածքային սուվերեն իրավունքը տարածվում էր 214.000 կմ^2 տարածքի վրա, որից 70.551 կմ^2-ը 1920 թ. մայիսի դրությամբ կազմել էր ՀՀ տարածքը, իսկ 143.449 կմ^2-ին ներառում էր Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզ-*

---

[64] Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920. 2011; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2002, 557 (док. № 473).

[65] Акопян. 2021; Марукян. 2021, 3-19; *Հովհաննիսյան. 2021, 20–46, Մարուքյան. 2021, 301–318 (I–XVIII), Հովհաննիսյան. 2021, 319–337 (XIX–XXXVII):*

[66] *Պապյան. 2012, Մարուքյան. 2014, Մարուքյան. 2014, Մարուքյան. 2023, 196–226:*

[67] *1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու. 2023:*

ռումի և Տրապիզոնի վիլայեթների տարածքը, որը Վ. Վիլսոնի իրավարար վճռի հիման վրա միացվելու էր ՀՀ-ին[68]: Սակայն հետագա տարիներին և մինչ օրս ՀՀ-ն ոչ միայն չի հասել միջազգային իրավունքով իրեն պատկանող տարածքային սուվերեն իրավունքի բավարարմանը, այլև ունեցել է էական տարածքային կորուստներ: Չնայած այդ հանգամանքին, ՀՀ տարածքային ինքնիշխանության իրավունքի տիտղոսը համարվում է հայ ժողովրդի հողային սեփականության ու դրա ժառանգության իրավունքի անբեկանելի և անժամանցելի վավերագիրը:

Եզրակացություն

1878–1923 թթ. Հայկական հարցի դիվանագիտական բովանդակության աստիճանական փոփոխությանը նվիրված ուսումնասիրությունները ոչ միայն նոր խոսք են հայ պատմագիտության մեջ, այլև ունեն գործնական նշանակություն Թուրքիայի կողմից խլված Արևմտյան Հայաստանի, Կարսի ու Արդահանի, Ադրբեջանի կողմից հայաթափված և գավթված Նախիջևանի ու Արցախի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու տեսանկյունից: Բացի այդ, անցյալի խորքային իմացությունը նպաստում է ներկա իրադրության առանձնահատկությունները գնահատելուն, ապագայի վերաբերյալ հիմնավոր կանխատեսումներ կատարելուն: Մասնավորապես, անհնար է չնկատել, որ մեր օրերում բռնազավթված Արցախի վերադարձի, Հայաստանի երրորդ Հանրապետության անվտանգության, իրավական կարգավիճակի ու ապագայի հարցերը ևս դարձել են Հայկական հարցի մաս:

Հայկական հարցի հիմնախնդիրների նորովի ուսումնասիրումը փաստական և վերլուծական ծանրակշիռ հիմք է հայ ժողովրդի ու հայկական անկախ պետության համար՝ ազգային խնդիրների լուծման գործում արտաքին քաղաքական ուժերի ազդեցության ու աջակցության վրա հեռատեսորեն հենվելու, միևնույն ժամանակ դրանցով չտարվելու, միջազգային իրադրության փոփոխություններից շահեկանորեն օգտվելու կարողություն մշակելու տեսանկյունից: Մասնավորապես, Հայ դատի պատմական ընթացքի, դրան վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում հայ հասարակության և նրա շահերը ներկայացնող իշխանությունների համար այլևս անառարկելի է, որ Թուրքիայի ու Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը հնարավոր է միայն Հայաստանին ներկայացված նախապայմաններից Թուրքիայի հրաժարման դեպքում՝ օրակարգում պահելով մեր բռնազավթված Հայրենիքի վերադարձի խնդիրը:

Լիլիթ Հովհաննիսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցեր: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և շուրջ 50 հոդ-

[68] *1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու. 2023, 304–306:*

վածի: ORCID:0009-0007-7896-3922; lilithovannisian@yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու. 2023, Երևան, «Գիտություն», 320 էջ:

Ավետիսյան Հ. 1997, Հայկական հարցը 1918 թվականին, պատ. խմբ.՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, «Բարձրագույն դպրոց», 436 էջ:

Ավետիսյան Հ. 2000, Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի հարցի շուրջ (1919–20). – Հայկական հարց. Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան, խմբ.՝ Ստ. Պողոսյան, Հ. Ավետիսյան և ուրիշներ, Երևան, «Արտագերս», էջ 24–31:

Ավստրո–Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, կազմ. և առաջաբ.՝ Ա. Օհանջանյան, գերմ. թարգմ.՝ Վ. Մարտիրոսյան, խմբ.՝ Լ. Բարսեղյան, Մատենաշար «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը», թիվ 3, Երևան, «Նահապետ», 130 էջ:

Արզումանյան Մ. Վ. 1969, Հայաստան 1914–1917 թթ., Երևան, «Հայաստան», 780 էջ:

Բարդակչյան Գ. Պ. 2005, Հիտլերը և հայոց ցեղասպանությունը (Հիտլերի ճառը 1939 թ. օգոստոսի 22-ին), անգլ. թարգմ.՝ Շ. Ս. Ալթունյան, Երևան, «Նշանակ», 88 էջ:

Բարսեղով Յու. 1999, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, «ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» հրատ., 33 էջ:

Գալոյան Գ. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., խմբ.՝ Վ. Միքայելյան, Երևան, «Գիտություն», 539 էջ:

Գալոյան Գ. 2004, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), խմբ.՝ Է. Դանիելյան, Երևան, «Գիտություն», 822 էջ:

Դադրյան Վ. 2012, Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, անգլ. թարգմ.՝ Ա. Բեժանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 44 էջ:

Դանիելյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա. 2008, Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Զանգակ–97» հրատ., 352 էջ:

Զոհրաբյան Է. Ա. 2002, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր–1920 թ. ապրիլ), Երևան, ա. հ., 266 էջ:

Լեո. 1994, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Երևան, «Շաղիկ» (առաջին հրատ.՝ Փարիզ, տպագրություն Պահրի եղբարց, 1934), 203 էջ:

Խուրշուդյան Լ. 1995, Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, խմբ.՝ Բ. Ուլուբաբյան, Երևան, «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», 100 էջ:

Խուրշուդյան Լ. 2002, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ., 315 էջ (լրացվել և վերահրատարակվել է 2017 թ.):

Կարապետյան Հ. 2004, Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, խմբ.՝ Ա. Հարությունյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 128 էջ:

Կիրակոսյան Ձ. Ս. 1965, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Երևան, «Հայաստան», 510 էջ (2-րդ լրացված հրատ.՝ 1967, 557 էջ):

Կիրակոսյան Ձ. Ս. 1978, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70–ական թթ.), Երևան, «Հայաստան», 353 էջ:

Կիրակոսյան Ձ. Ս. 1980, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80–ական թթ.), Երևան, «Հայաստան», 456 էջ:

Կիրակոսյան Ձ. Ս. 1982, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. –1914 թ.), գիրք առաջին, Երևան, «Հայաստան», 357 էջ:

Կիրակոսյան Ձ. Ս. 1983, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. –1914 թ.), գիրք երկրորդ, Երևան, «Հայաստան», 462 էջ:

Կոստանդյան Է., Հովհաննիսյան Ռ. 2010, Հայկական հարցի միջազգայնացումը. – Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք I (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), խմբ.՝ Ա. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ-97», էջ 429-447:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923). 1972, խմբ.՝ պրոֆ. Ձ. Ս. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան», 809 էջ:

Հակոբյան Ա. 2006, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ. – ՊԲՀ, № 3, էջ 36-56:

Հակոբյան Ա. 2018, Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: Անկախության 100-ամյակի առթիվ, խմբ.՝ Գ. Ս. Խուդինյան, Երևան, «Լուսակն», 152 էջ:

Հակոբյան Ա. 2020, Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում, խմբ.՝ Խ. Ստեփանյան, Երևան, «Լուսակն», 211 էջ:

Հակոբյան Ա. 2022, Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը 1920 թ., պատ. խմբ.՝ Դ. Գասպարյան, Հ. Գրիգորյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 509 էջ:

Հակոբյան Հ. Վ. 2002, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, խմբ.՝ Վ. Բայբուրդյան, Երևան, «Ասողիկ», 414 էջ:

Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 2004, պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, Երևան, ՀԱԱ հրատ., 794 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, g. 1, գ. 151, թ. 12–13, 20–21, g. 5, գ. 154, թ. 1, ֆ. 200, g. 2, գ. 31, թ. 1–17:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, խմբ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Երևան, «Հայաստան», 758 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1981, խմբ. խորհ.՝ Ծ. Պ. Աղայան, Ա. Գ. Հովհաննիսյան, Մ. Գ. Ներսիսյան, Գ. Ա. Գալոյան և ուրիշ., հ. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1050 էջ:

Հարությունյան Ա. 2004, Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, խմբ.՝ Վ. Ղազախեցյան, Երևան, «Գիտություն», 139 էջ:

Հովհաննիսյան Լ. 2002, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, խմբ.՝ Հ. Ավետիսյան, Երևան, «Զանգակ–97», 182 էջ:

Հովհաննիսյան Լ. 2010, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1917 թվականին. – Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու 11), խմբ. խորհ.՝ Ա. Ա. Մելքոնյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, Պատմ. ինստ., էջ 240–257:

Հովհաննիսյան Լ. 2013, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի նշանակությունը 1895 թ. Մայիսյան ծրագրի հետ համեմատության լույսի ներքո. – Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու 14), խմբ. խորհ.՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան և ուրիշներ, Երևան, Պատմության ինստիտուտ, էջ 119-133:

Հովհաննիսյան Լ. 2019, Հայկական հարցի պատմության 1917–1918 թթ. հիմնախնդիրների լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2018 թթ.). – ՊԲՀ, № 1, էջ 107–125:

Հովհաննիսյան Լ. 2020, Հայկական հարցի 1915–1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսաբանումը Հայաստանյան պատմագիտության մեջ (1991–2015 թթ.), խմբ.՝ Գ. Մախմուրյան, Երևան, Պատմության ինստիտուտ, 384 էջ:

Հովհաննիսյան Լ. 2021, Ռուս-թուրքական գործակցությունը և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը Հայաստանյան պատմագիտության գնահատմամբ (1991-2020 թթ.). – ՊԲՀ, № 1, էջ 20-46:

Հովհաննիսյան Լ. 2021, 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը Հայաստանյան արդի պատմագիտության գնահատմամբ (1991–2021 թթ.).- «Վէմ» համահայկական հանդես (Երևան), հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, էջ 319–337 (XIX–XXXVII):

Հովհաննիսյան Լ. 2022, Հայկական հարցի ուսումնասիրության արդյունքները Հայաստանյան պատմագիտության մեջ (1991–2021 թթ.). – Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ. միջազգային գիտաժողով, 31 մայիսի, 2022, գիտական հոդվածների ժողովածու, խմբ.՝ Ն. Հակոբյան, Երևան, «Տիր», էջ 469–478:

Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հայաստանի Հանրապետություն, հ. Ի՝ Առաջին տարին, 1918–1919, խմբ.՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, «Տիգրան Մեծ», 604 էջ:

Հովհաննիսյան Ռ. Գ. 2014, Հայաստանի Հանրապետություն, հ. II՝ Վերսալից–Լոնդոն, 1919–1920, խմբ.՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, «Տիգրան Մեծ», 665 էջ:

Հովհաննիսյան Ռ. Գ. 2015, Հայաստանի Հանրապետություն, հ. III՝ Լոնդոնից–Սևր, փետրվար–օգոստոս, 1920, խմբ.՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, «Տիգրան Մեծ», 628 էջ:

Հովհաննիսյան Ռ. Գ. 2016, Հայաստանի Հանրապետություն, հ. IV՝ Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, խմբ.՝ Ա. Ա. Խառատյան, Երևան, «Տիգրան Մեծ», 572 էջ:

Մախմուրյան Գ. 2015, Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917−1918 թթ. քաղաքականության ոլորտում. – Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ), միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, խմբ.՝ Ա. Մարուքյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., էջ 158–171:

Մարուքյան Ա. 2014, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, խմբ՝ Ա. Մելքոնյան, Վ. Վարդանյան, Երևան, Պատմության ինստիտուտ, 332 էջ:

Մարուքյան Ա. 2014, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, «Տիր», 216 էջ:

Մարուքյան Ա. 2021, Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրի գործադրման ընթացակարգերը. – «Վէմ» համահայկական հանդես (Երևան), հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, էջ 301–318 (I–XVIII):

Մարուքյան Ա. 2023, Հայկական հարցը Լոզանի խորհրդաժողովում. 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի 100–ամյակի առթիվ. – «Վէմ» համահայկական հանդես (Երևան), ապրիլ-հունիս, թիվ 2, էջ 196–226:

Մելիքյան Վ. Հ. 1997, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), պատ. խմբ.՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, «Մխիթար Գոշ», 320 էջ:

Մելիքյան Վ. 2007, Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երևան, «Զանգակ-97», 80 էջ:

Մելիքեան Վ. 2010, Հայկական պահանջատիրութիւն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, Երեւան, «Զանգակ-97», 120 էջ:

Մելիքյան Վ. Հ. 2010, Հայաստանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո. – Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք II (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին): Խմբ.՝ Ա. Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ-97», էջ 543–579:

Մելքոնյան Ա. 1998, Հայոց պատմություն. դասախոսությունների ձեռնարկ, Երևան, «Հայագիտակ», 278 էջ:

Մելքոնյան Ա. 2011, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, «Միտք» վերլուծական կենտրոն, 456 էջ:

Մելքոնյան Ա. 2013, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, «Գիտություն», 632 էջ:

Մելքոնյան Ա. Ա. 2015, Ցեղասպանություն և հայրենազրկում: Ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), Երևան, «Զանգակ», 440 էջ:

Մելքոնյան Ա. 2021, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 488 էջ:

Մելքոնյան Ա. 2022, Համաթյուրքականության ծրագրերը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում. – Հայկական հարցը միջազգային հարաբերություններում (1895–1923 թթ.), հոդվածների ժողովածու, խմբ.՝ Ա. Մելքոնյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., էջ 259–276:

Մելքոնյան Ա. 2022, Հայկական տարածքների խնդիրը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում (հայացք 100 տարի անց). – Հայկական հարցը միջազգային հարաբերություններում (1895-1923 թթ.), հոդվածների ժողովածու, խմբ.՝ Ա. Մելքոնյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., էջ 277–290:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. I, աշխատասիրությամբ՝ Ա. Պեյլերյան, առաջաբ.՝ Ժան-Բատիստ Դյուրոզել, թարգմ. ֆրանս.՝ Վ. Պողոսյան, Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), 484 էջ:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. II, աշխատասիրությամբ՝ Ա. Պեյլերյան, առաջաբ.՝ ժան-Բատիստ Դյուրոզել, թարգմ. ֆրանս.՝ Վ. Պողոսյան, Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), 520 էջ:

«Մշակ» (Թիֆլիս), 17. IX. 1917, 20. IX. 1917, 21. IX. 1917, 22. IX. 1917, 24. IX. 1917, 26. IX. 1917, 27. IX. 1917:

Մսըրլեան Զ. 1979, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920–1921 թթ.), Պէյրութ, «Թեքնոփրէս Մոտեռն», 176 էջ:

Մսըրլեան Զ. 2010, Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900–2009 թթ.), Պէյրութ, «Սիփան», 160 էջ:

Մսըրլեան Զ. 2022, Հայոց նորագույն պատմութեան էջերէն (1915–2020), Պէյրութ, «Սիփան», 239 էջ:

Նասիպեան Ա. 1994, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915–1923, Պէյրութ, «Սիփան», 343 էջ:

Պապյան Ա. 2012, Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Երևան, «Ասողիկ», 488 էջ:

Պետրոսյան Գ. 2018, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար–1918 թ. հունիս), Երևան, ԵՊՀ հրատ., 268 էջ:

Պետրոսյան Գ. 2023, Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918–1920 թթ., գիրք առաջին, Երևան, ԵՊՀ հրատ., 484 էջ:

Պողոսյան Ս. 2016, Միացյալ Հայաստանի խնդիրը 1917–1918 թթ. – «Պատմություն և հասարակագիտություն» (Երևան), թիվ 2, էջ 8–23:

Պողոսյան Ստ., Պողոսյան Կ. 2004, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա. Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը, Երևան, «Հայաստան», 392 էջ:

Պօղոսեան Ս. 2004, Պօղոս Նուբար փաշա: Ազգային գործիչը, գիտ. խմբ.՝ Մ. Կարապետյան, Ս. Դանիելյան, Երևան, «Զանգակ–97», 264 էջ:

Սարգսյան Ե., Սահակյան Ռ. 1963, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, «Հայպետհրատ», 96 էջ:

Սարգսյան Ե. Կ. 1964, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, 1914–1918 թթ., Երևան, «Հայաստան», 528 էջ:

Սիմոնյան Հր. 1991, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 630 էջ:

Տէրտէրեան Գ. 2016, Մեր հողային պահանջատիրութիւնը միջազգային հանրային իրավունքին մէջ (Տարագիր Արեւմտահայութեան Համաստիւռքեան Քոնկրէսին ՏԱՀՔ-ի Հրամայականը), Բ. տպագրութիւն, Պէյրութ, «Զինկոգրաֆ Կեսդենեան», 247 էջ:

Акопян А. 2021, Московский и Карсский договоры в судьбе армянского народа (по поводу 100-летия заключения договоров). Отв. ред. Х. Степанян. Ереван, «Гитутюн», 199 с.

Архив полковника Хауза. 1944, т. IV. М., «Политиздат», 403 с.

Барсегов Ю. 1990, Геноцид армян – преступление против человечества. (О правомерности термина и юридической квалификации). Ереван, «Айастан», 32 с.

Барсегов Ю. 1995, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе: (полит. и междунар. – правовой коммент.). Ереван, «Библиотека русско-армянских инициатив», 18 с.

Барсегов Ю. 2000, Геноцид армян – преступление по международному праву. М., «XXI век-Согласие», 238 с.

Барсегов Ю. 2022, Турецкая доктрина международного права на службе политики геноцида. (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана). М., «Готика», http://armenianhouse.org/barsegow/genocide-ru/doctrine/doctrine.html (դիտվել է՝ 09. 02. 2024 թ.):

Борьян Б. А. 1928, Армения, международная дипломатия и СССР, ч. I. М.–Л., «ГИЗ», 448 с.

Борьян Б. А. 1929, Армения, международная дипломатия и СССР, ч. II. М.–Л., «ГИЗ», 434 с.

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. 1983, ред. М. Г. Нерсисян, сост. М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Ереван, «Айастан», XVI+685 с. (գիրքը հրատարակվել է նաև 1966, 1982 թթ.).

Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2002, Документы и комментарий, в 2 томах, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, т. 1. М., «Гардарики», 814 с.

Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2003, Документы и комментарий, в 2 томах, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., «Гардарики», 912 с.

Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. 2005, Документы и комментарий, в 2 томах, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. т. 2, ч. 2. М., «Гардарики», 608 с.

Дадрян В. 2007, История Армянского геноцида: этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, пер. с англ. С. Д. Оганесян, науч. ред. А. В. Акопян. Ереван, «Ноян Тапан», 620 с.

Марукян А. Ц. 2003, Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), отв. ред. Тунян В., Багдасарян Р. Ереван, МИГА НАН РА, 482 с.

Марукян А. 2021, Историко-правовой анализ советско-турецкого Московского договора 1921 года «О дружбе и братстве». – ИФЖ, № 1, с. 3–19.

Махмурян Г. Г. 2018, Армения в политике США 1917–1923 гг., ред. А. В. Гамбарян. Ереван, Институт истории НАН РА, 607 с.

Махмурян Г. Г. 1999, Лига наций, Армянский вопрос и Республика Армения. Институт истории НАН Армении. Ереван, «Артагерс», 176 с.

Махмурян Г. Г. 2002, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Бремя белого человека. Институт истории НАН РА. Ред. С. С. Степанян. Ереван, «Лусакн», 309 с.

Ованнесян Р. Г. 2007, Международные отношения Республики Армения, 1918–1920 гг., пер. с англ. Г. Г. Махмурян. Ереван, «Тигран Мец», 920 с.

Саркисян Е. К. 1962, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, АН АрмССР, 496 с.

Саркисян Е. К. 1972, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, АН АрмССР, 329 с.

Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920. 2011, prepared with an introduction by A. Papian. Yerevan, "Asoghik" Publishing House, 332 p.

Armenia in documents of the U.S. Department of State, 1917–1920. 2020, compiled and translated by Gayane Makhmourian, ed. V. R. Aglyan. Yerevan, Institute of History NAS of Armenia, 560 p.

Marashlian L. 1991, Politics and Demodraphy: Armenians. Jurhs and Hurds in the Ottoman Empire. N. Y., Zoryan Institute, 152 p.

Marashlian L. 2000, Ermeni Sorunu ve Turk-Amerikan Iliskileri–1919–1923. Istanbul, Belge Iluslararasi Yayincilek, 119 s.

Masserlian Z. 2015, Three treaties: Alexandropol, Moscow and Kars treaties (1920–1921). Beirut, Chemaly&Chemaly, 190 p.

Masserlian Z. 2021, Studies and documents on the Armenian question and denocide. Beirut, «Sipan», 111 p.

Papers relating to the foreign relations of the United States. 1917 Supplement 1, The World War. 1931, Washington, D. C., US Government Printing Office, p. 603.

Petrosyan G. 2023, Historical rethinhing of relations with the First Republic of Armenia and the United States of Armenica: The dilemma of orientation and expectations. – «Journal of political science», YSU, Vol. 2, № 2 (5), pp. 76–99.

Ohanian C. P. 2005, La Cuestión Armenia y las Relaciones Internacionales, t. 5 (1919), director L. Barseghian. Buenos Aires: Akian Gráfica Editora, 942 p.

Ohanian C. P. 2010, La Cuestión Armenia y las Relaciones Internacionales, t. 6 (1920), director L. Barseghian. Buenos Aires: Akian Gráfica Editora, 1456 p.

Ohanjanian A. 1995, Österreich-Armenien 1872–1936: Faksimilesammlung diplomatischer Aktenstücke: herausgegeben und eingeleitet von Artem Ohanjanian. Bände 1-12. Wien: Ohandjanian Eigenverlag, s. 5509-6255.

Ohanjanian A. 2005, Die Armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschlands. Jerewan, 54 p.

Österrich-Ungarn und Armenien 1912–1918. Sammlung diplomatischer Aktenstücke. 2005, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. A. Ohanjanian. Jerewan, Institut-Museum für Armenischen Genozid der Akademie der Wissenschaften Armeniens, 521 p.

ЭТАПЫ ДИПЛОМАТИЧЕСКИХ ОБСУЖДЕНИЙ АРМЯНСКОГО ВОПРОСА В 1878–1923 ГГ. ПО ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ (1991–2023 гг.)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армянский вопрос, Республика Армения, историческая наука, Западная Армения, реформы, автономия, независимость, самоопределение, мирный договор, тайные соглашения.

За 32 года независимости Республики Армения армянские историки проделали ценную работу в направлении анализа и оценки как коллективных обязательств великих держав, их содержания, так и ближневосточных интересов каждой из держав, их межгосударственных конфликтов в вопросе Западной Армении. В этом контексте раскрылись основные этапы дипломатического содержания Армянского вопроса от реформ Западной Армении к автономии, затем к независимости, а затем к защите прав армянского национального меньшинства в Турции.

Армянские историки в своих исследованиях опираются на фундаментальные исследования советского периода по данному вопросу. При этом их научные труды дополняются введенными в научный оборот новыми дипломатическими документами, фундаментальными произведениями историков армянской диаспоры. Также ведется ценная работа в направлении переоценки дипломатических дискуссий и международных соглашений, связанных с Армянским вопросом с историко-правовой точки зрения, оценки их практического и прикладного значения, представления историко-правовых основ и обоснования права армян вернуться на родину.

Лилит Оганисян – к. и. н., старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА, доцент Иджеванского филиала ЕГУ и Международного научно-образовательного центра НАН. Научные интересы: вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян. Автор 2 монографий, 5 научно-методических пособий и около 50 статей. ORCID:0009-0007-7896-3922; lilithovannisian@yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 1

STAGES OF DIPLOMATIC DISCUSSIONS OF THE ARMENIAN QUESTION IN 1878–1923 ACCORDING TO THE ASSESSMENT OF ARMENIAN HISTORICAL SCIENCE (1991–2023)

LILIT HOVHANNISYAN

S u m m a r y

Keywords: Armenian question, Republic of Armenia, historical science, Western Armenia, reforms, autonomy, independence, self-determination, peace treaty, secret agreements.

During the 32 years of independence of the Republic of Armenia, Armenian historians have done valuable work in the direction of analyzing and evaluating both the collective obligations of the Great powers, their content and the Middle Eastern interests of each of the powers, their interstate conflicts on the issue of Western Armenia. In this context, the main stages of the diplomatic content of the Armenian question, from the reforms of Western Armenia to autonomy, then to independence, and then to the protection of the rights of the Armenian national minority in Turkey, were revealed.

When conducting their research, Armenian historians rely on the fundamental studies of the Soviet period on this issue. At the same time, their scientific works are supplemented with new diplomatic documents introduced into scientific circulation, and fundamental works by historians of the Armenian diaspora. Valuable work is also being carried out in the direction of re-evaluating diplomatic discussions and international agreements related to the Armenian question from a historical and legal point of view, assessing their practical and applied significance, and presenting the historical and legal bases and justifications of the Armenians' right to return to their homeland.

Lilit Hovhannisyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide of the Institute of History of NAS RA, Associate Professor at the Ijevan Branch of YSU and the International Scientific and Educational Center of NAS RA. Scientific interests: issues of history and historiography of the Armenian question and the Armenian Genocide. Author of 2 monographs, 5 methodical textbooks and about 50 articles. ORCID:0009-0007-7896-3922; lilithovannisian@yahoo.com; l_hovhannisyan@ysu.am; lilit.hovhannisyan@isec.am